ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/41/2026

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **30 մարտի 2026թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Եփրեմ Կարապետյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2026 թվականի մարտի 30-ին, քննության առնելով «Արժանապատիվ ապագա» կուսակցության (այսուհետ՝ նաև Կուսակցություն) տնօրեն Արմեն Դարբինյանի կողմից 2025 թվականի ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/41/2026 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված Հանձնաժողովի լիազորության շրջանակներում, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ինչպես նաև 27-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով սահմանված պահանջների պահպանվածության ստուգման արդյունքում հայտնաբերել է, որ 2025 թվականի ընթացքում Կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունը (այսուհետ՝ նաև Տարեկան հաշվետվություն) օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չի ներկայացվել:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալի հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2026 թվականի մարտի 3-ին Կուսակցության նախագահին է ուղարկել թիվ 01/493/9-2026 գրությունը՝ հրավիրելով նշված գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ օրը ներկայանալու Հանձնաժողով, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ ծանուցումն ստանալուն հաջորդող 5-րդ օրը՝ գործի քննությանը մասնակցելու նպատակով:

1.3 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծանուցումն ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Հանձնաժողովը չի ստացել հետադարձ ծանուցումը՝ Հանձնաժողովը, առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի դրույթներով, ծանուցումը 2026 թվականի մարտի 18-ին ուղարկել է Երևանի քաղաքապետին՝ միաժամանակ այն տեղադրելով Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am), որից հետո՝ հինգերորդ օրը՝ 2026 թվականի մարտի 23-ին, համապատասխան ծանուցումը համարվել է հանձնված (ստացված):

1.4 2026 թվականի մարտի 26-ին կազմվել է թիվ ՎԻՎ 57/26 արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.6 2026 թվականի մարտի 30-ին Հանձնաժողով է մուտքագրվել Ստեփան Ծաղիկյանի գրությունն առ այն, որ Կուսակցության 2024 թվականի սեպտեմբերի 21-ի համագումարում

Արմեն Դարբինյանն ազատվել է Կուսակցության նախագահի պաշտոնից և ինքը՝ Ստեփան Ծաղիկյանը, ընտրվել է Կուսակցության նախագահ՝ հերթական համագումարում այդ փաստը հաստատելու պայմանով, 2025 թվականին անցկացվել է Կուսակցության արտահերթ համագումար՝ Կուսակցության նոր կանոնադրությունը հաստատելու և իր՝ Ս.Ծաղիկյանի Կուսակցության նախագահ ընտրվելու փաստը հաստատելու նպատակով, սակայն գրանցումը չի իրականացվել՝ արտահերթ համագումար անցկացնելու կարգի խախտմամբ կայացված լինելու պատճառով: Միևնույն ժամանակ Ս.Ծաղիկյանը հայտնել է, որ թերացումը տեղի է ունեցել այդ հարցով պատասխանատու Միացյալ խորհրդի անդամի անփույթ վերաբերմունքի պատճառով ու քայլեր են ձեռնարկվում գրանցումն իրականացնելու խոչընդոտը վերացնելու ուղությամբ:

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Արմեն Դարբինյանի բացակայությամբ 2026 թվականի մարտի 30-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Սույն վարույթի շրջանակներում վարույթի մասնակցի կողմից պարզաբանումներ չեն ներկայացվել:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/41/2026 վարչական վարույթում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ Արմեն Դարբինյանը 2004 թվականի մարտի 16-ից հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը՝ տնօրեն:

3.2 ՎԻՎ/88/2023-2024 և ՎԻՎ/89/2023-2024 վարույթների շրջանակներում Արմեն Դարբինյանի կողմից Հանձնաժողով է մուտքագրվել Մ-89.2024 գրությունը, որով վերջինս հայտնել է. «Տարակուսանքով ծանոթացա Ձեր՝ 2023թ. հ. 01/2961-2023 գրությանը, քանի որ արդեն տասնամյակների ընթացքում առնչություն չունեմ կուսակցական գործունեության հետ: (...)

Իմ հիշողությամբ, դեռևս 2003 թվականին դիմել եմ "Արժանապատիվ Ապագա" կուսակցության Միացյալ Խորհրդին՝ տեղեկացնելով կուսակցության նախագահի իմ գործառույթները կասեցնելու որոշման մասին: Ձեր գրությունը սակայն փաստում է, որ հավանաբար ինչ-ինչ կազմակերպչական բացթողումների պատճառով նշված փաստը պատշաճ կերպով արձանագրված և ձևակերպված չէ:

Ինչևիցե, ես փոխանցել եմ Հանձնաժողովի կողմից կազմված Արձանագրությունը կուսակցության Միացյալ Խորհրդի անդամ պրոֆեսոր Ստեփան Ծաղիկյանին, որը և ներկա կգտնվի ս.թ. հունվարի 9-ին կայանալիք գործի քննությանը:»

3.3 Հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 7-ին, ՎԻՎ/166/2025 վարույթի շրջանակներում, Կուսակցության ներկայացուցիչ Ստեփան Ծաղիկյանը ներկայացել է Հանձնաժողով՝ թիվ 116/25 ՎԻՎ արձանագրությունը կազմելուն մասնակցելու նպատակով և հայտնել է, որ փաստացի որպես Կուսակցության ղեկավար նշանակվել է նախորդ տարի՝ Կուսակցության քաղխորհրդի որոշմամբ, որից հետո էլ ստանձնել է Կուսակցության ղեկավարումը, իսկ Կուսակցության կողմից ցուցաբերվել է խախտում, որը կվերացնեն սեղմ ժամկետում:

3.4 2024 թվականի սեպտեմբերի 20-ի՝ «Արժանապատիվ ապագա» կուսակցության արտահերթ համագումարի արձանագրության համաձայն՝ ի լրումն այլ հարցերի, քննարկվեց «Միացյալ խորհրդի կուսակցության նախագահին ընտրելու որոշման հաստատման մասին» հարցը, որի արդյունքում որոշվեց բաց քվեարկությամբ հաստատել Ս.Ծաղիկյանին կուսակցության նախագահ ընտրելու մասին Միացյալ խորհրդի որոշումը:

3.5 2026 թվականի մարտի 30-ին Հանձնաժողովում ստացվել է Ստեփան Ծաղիկյանի գրությունը, համաձայն որի՝ ««Արժանապատիվ ապագա» կուսակցության միացյալ խորհուրդը, կանոնադրությամբ ամրագրված լիազորությունների շրջանակներում, 21.09.2024 թվականի

արտահերթ համագումարի նիստում հարգել է կուսակցության նախագահ Արմեն Ռազմիկի Դարբինյանի դիմումը՝ ազատելով նրան կուսակցության նախագահի պաշտոնից և միաձայն քվեարկության արդյունքում կուսակցության նախագահ է ընտրել Ստեփան Ծաղիկյանին: 2025 թվականին անց է կացվել կուսակցության արտահերթ համագումարը, որը հաստատել է միացյալ խորհրդի որոշումը՝ Ս.Շ. Ծաղիկյանին կուսակցության նախագահ ընտրելու մասին: Նշյալ փոփոխությունները դեռևս գրանցված չեն Գործակալությունում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կուսակցության կողմից խախտվել է արտահերթ համագումար անցկացնելու մասին (azdarar.am) կայքում հայտարարություն տալու կարգը:

3.6 Մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը Տարեկան հաշվետվությունը ներկայացվել է Հանձնաժողով:

3.7 Ներկայացված Տարեկան հաշվետվության համաձայն՝ Կուսակցությունը 2025 թվականի ընթացքում ֆինանսական գործունեություն չի ծավալել:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 Սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունը:

4.2 Սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր հաշվետու տարվա տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 20-ը:

4.3 Սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կուսակցության տարեկան հաշվետվությունը ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, հրապարակվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պաշտոնական՝ www.cpcarmenia.am կայքում՝ առանձին բաժնում տեղադրելու միջոցով:

4.4 Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ գործերը:

4.5 Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 Օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, պետության անվտանգության ապահովման, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

4.7 Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում լիազոր մարմին չներկայացնելը կամ դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելը առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

4.8 Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է

համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

4.9 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.10 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.11 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.12 Օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության դեպքում:

4.13 Օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

4.14 Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.15 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.16 «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական գրանցման կամ պետական հաշվառման համար գործակալություն ներկայացվող դիմումը պետք է բովանդակի՝ (...) դիմող իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ լիազորված անձի ստորագրությունը:

4.17 Նույն օրենքի 26-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ «Կուսակցությունների վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում գրառման ենթակա չեն սույն հոդվածի 1-ին մասի 10-րդ, 11-րդ և 12-րդ կետերով նախատեսված տեղեկությունները, և գրառվում են մշտական գործող ղեկավար մարմնի անդամների վերաբերյալ տեղեկությունները (անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի համարը, սերիան, ում կողմից և երբ է տրվել, սոցիալական քարտի համարը կամ նշում անձի՝ սոցիալական քարտից հրաժարվելու մասին և համապատասխան տեղեկանքի համարը):»:

4.18 Սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կուսակցության համագումարի բացառիկ իրավասություններն են մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի ընտրությունը, եթե կուսակցության կանոնադրությամբ նախատեսված է մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի պաշտոն:

4.19 Կուսակցության կանոնադրության 9.3-րդ և 9.4-րդ կետերի համաձայն՝ Կուսակցության նախագահի հրաժարականն ընդունվում է համագումարի պատգամավորների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ: Կուսակցության նախագահի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարել արտահերթ համագումարում համագումարի պատգամավորների ձայների երկու երրորդով ընդունված որոշմամբ:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

ՀՀ սահմանադրական դատարանը 12.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-920 որոշման շրջանակներում անդրադարձել է ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքին՝ նշելով, որ

վարչական պատասխանատվության սկզբունքներից է «պատասխանատվությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ: Հետևաբար՝ մեղքը, որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր, հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը:

Նույն սկզբունքին ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է թիվ ՎԴ/4936/05/14 որոշման շրջանակներում, որտեղ արձանագրել է, որ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի էությունն այն է, որ անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ զանցանքի կատարման մեջ վերջինիս մեղավորությունը (դիտավորություն կամ անզգուշություն) հաստատված է իրավասու մարմնի կողմից, քանի որ անձի արարքում մեղքի բացակայությունը վկայում է վարչական իրավախախտման բացակայության մասին (տե՛ս, Արսեն Խաչատրյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/4936/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը):

Համակարգային վերլուծության ենթարկելով վերոգրյալ իրավական կարգավորումները՝ Հանձնաժողովն եզրակացնում է, որ անձը կարող է պատասխանատվության ենթարկվել Օրենսգրքով նախատեսված միայն այնպիսի հակաիրավական արարքի համար, որը կատարվել է մեղավորությամբ՝ դիտավորյալ կամ անզգուշությամբ կատարված: Ուստի այն բոլոր դեպքերում, երբ անձի վարքագծում բացակայում է մեղքը և արարքը չի կատարվել դիտավորությամբ կամ անզգուշությամբ՝ բացակայում է նաև Օրենսգրքով նախատեսված իրավախախտումը:

Վերոգրյալ իրավական կարգավորման բովանդակությունից պարզ է դառնում, որ կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի անդամների, այդ թվում՝ մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի վերաբերյալ տվյալները, ենթակա են պարտադիր գրառման իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում: Միևնույն ժամանակ՝ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում փոփոխություններ կատարելու

իրավասություն ունի միայն համապատասխան իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը կամ լիազորված անձը:

Սույն գործի հանգամանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Արմեն Դարբինյանը դիմել է Կուսակցությանը՝ Կուսակցության ղեկավար մարմնի ղեկավարի իր պարտականությունները դադարեցնելու նպատակով, և այդ հանգամանքը հաստատվում է ինչպես Արմեն Դարբինյանի կողմից Հանձնաժողով ներկայացված Մ-89.2024 գրությունով, այնպես էլ՝ 2024 թվականի սեպտեմբերի 20-ի՝ «Արժանապատիվ ապագա» կուսակցության արտահերթ համագումարի արձանագրությունից և Ստեփան Ծաղիկյանի կողմից սույն և ՎԻՎ/166/2025 վարույթների շրջանակներում հայտնած տվյալներով: Միևնույն ժամանակ, գործով ձեռք բերված տվյալները վկայում են այն մասին, որ Արմեն Դարբինյանի՝ կուսակցության ղեկավար մարմնի ղեկավարի պաշտոնն այլևս չզբաղեցնելու հանգամանքը դեռևս պաշտոնական գրանցում չի ստացել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Կուսակցության պատասխանատու անձի կողմից չի պահպանվել Կուսակցության արտահերթ համագումարի անցկացնելու մասին azdarar.am կայքում հայտարարություն տալու կարգը:

Այսպիսով Հանձնաժողովն արձանագրում է, որ Արմեն Դարբինյանի կողմից ձեռնարկվել են Կուսակցության ղեկավար մարմնի ղեկավարի իր պարտականությունները դադարեցնելու համար անհրաժեշտ գործողություններ և միայն Կուսակցության պատասխանատու պաշտոնատար անձի՝ Կուսակցության արտահերթ համագումար անցկացնելու մասին azdarar.am կայքում հայտարարություն տալու կարգի խախտման արդյունքում է, որ իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում չեն կատարվել համապատասխան գրառումներ՝ Արմեն Դարբինյանի՝ Կուսակցության ղեկավար մարմնի ղեկավարի պաշտոնավարումը դադարեցնելու վերաբերյալ:

Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված իրավանորմի համաձայն՝ *վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման* նույն հոդվածի 1-ին կետով սահմանված հանգամանքների դեպքում, այն է՝ ***վարչական իրավախախտման*** դեպքի կամ ***կազմի բացակայությունը***:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ սույն գործով իրավախախտման կազմը բացակայում է հետևյալ պատճառաբանությամբ.

Վարույթի ընթացքում պարզվել է, որ իրավախախտման ենթադրյալ գործողությունները կամ անգործությունը վերագրվել են անձի, ով փաստացի ձեռնարկել է օրենքով և Կուսակցության կանոնադրությամբ նախատեսված գործողություններ՝ որպես Կուսակցության ղեկավար մարմնի ղեկավարի իր պաշտոնավարումը դադարեցնելու նպատակով, սակայն Կուսակցության պատասխանատու պաշտոնատար անձի կողմից փաստացի չի ապահովվել Կուսակցության արտահերթ համագումար անցկացնելու մասին azdarar.am կայքում հայտարարություն տալու կարգը, ինչի արդյունքում չի ապահովվել Արմեն Դարբինյանի՝ որպես Կուսակցության ղեկավար մարմնի ղեկավարի պաշտոնավարման դադարեցման մասին տվյալի մասին գրառումը իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում: Այդպիսով, Հանձնաժողովն արձանագրում է, որ Արմեն Դարբինյանի վարքագծում բացակայում է մեղքը:

Հանձնաժողովն էական է համարում այն հանգամանքը, որ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը Տարեկան հաշվետվությունը ներկայացվել է Հանձնաժողով:

Հանձնաժողովն էական է համարում նաև այն հանգամանքը, որ մինչև գործի քննությունը Տարեկան հաշվետվությունը ներկայացվել է Հանձնաժողով, իսկ ըստ Տարեկան հաշվետվության՝ Կուսակցությունը 2025 թվականի ընթացքում ֆինանսական գործունեություն չի ծավալել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածով, Օրենսգրքի 282-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2026 թվականի մարտի 3-ին հարուցված վարչական իրավախախտումների վերաբերյալ ՎԻՎ/41/2026 գործի վարույթը կարճել՝ իրավախախտման կազմի բացակայության հիմքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Դարբինյանին այն սահմանված կարգով հանձնելուն (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ